Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1318-13.04.2026-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 134-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ եւ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված Հաշվետու ֆինանսական հաստատությունները Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով եւ Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով սահմանված ժամկետում հարկային մարմին են ներկայացնում Հաշվետու հաշիվների վերաբերյալ Ստանդարտով սահմանված տեղեկությունները:»:

Հոդված 2. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ եւ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված Հաշվետու ֆինանսական հաստատությունները Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով եւ Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով սահմանված ժամկետում հարկային մարմին են ներկայացնում Հաշվետու հաշիվների վերաբերյալ Ստանդարտով սահմանված տեղեկությունները:»:

Հոդված 3. Օրենսգրքի 335-րդ հոդված*ի 3-րդ մասում*՝

1) 9-րդ կետում «փակցնելը:» բառը եւ կետադրական նշանը փոխարինել «փակցնելը.» բառով եւ կետադրական նշանով,

2) լրացնել նոր՝ 10-րդ *կետ* հետեւյալ բովանդակությամբ.

«10) ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտությունը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 339-րդ հոդվածի *4-րդ մասում*՝

1) 1-ին կետի վերջում «անմիջապես ստուգումն սկսելիս.» բառերը փոխարինել «անմիջապես ստուգումն սկսելիս, իսկ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով սահմանված հարցը ներառող հանձնարարագրի կնքված երկու օրինակը առձեռն ծանոթացման է ներկայացվում ստուգումն սկսելիս երեք աշխատանքային օր առաջ.» բառերով,

2) 3-րդ կետում «եւ 6-րդ» բառերը փոխարինել «, 6-րդ եւ 10-րդ» բառերով,

3) 4-րդ կետում «եւ 8-րդ» բառերը փոխարինել «, 8-րդ եւ 10-րդ» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 340-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր՝ *1.2-րդ մաս* հետեւյալ *բովանդակությամբ*.

«1.2. ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության ստուգման հարցերը ներառում են՝

1) Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի 443.*4*-րդ հոդվածի *1-ին* մասով սահմանված *հարկային մարմին ներկայացվող* տեղեկությունների ամբողջականությունը եւ ճշտությունը ստուգելու նպատակով հարցերը,

2) Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից պատշաճ ստուգման ընթացակարգերով նախատեսված պարտավորությունների կատարումը ստուգելու հարցերը,

3) Օրենսգրքի 80.2-րդ գլխից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների կատարումը ստուգելու հարցերը:»:

2) 6-րդ մասում «տրանսֆերային գնագոյացման» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ թեմատիկ՝ ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության» բառերը:

Հոդված 6. *Օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասում «եւ 8-րդ» բառերը փոխարինել «, 8-րդ եւ 10-րդ» բառերով:*

Հոդված 7. Օրենսգրքի 402.3-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 402.3. Հաշվետու ֆինանսական հաստատության կամ հաշվետերերի եւ վերահսկող անձանց կողմից ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու, հաշվետերերի եւ վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն ներկայացնելու, ստուգման (ուսումնասիրության) ընթացակարգերը պահպանելու կանոնները խախտելը

1. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի *80.2-րդ* գլխով կամ *80.2-րդ* գլխով սահմանված իրավական ակտերով սահմանված պատշաճ ուսումնասիրության կամ հավաստող փաստաթղթերի պահպանման պարտավորությունները յուրաքանչյուր հաշվետիրոջ մասով չկատարելու դեպքում՝ Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

2. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված տեղեկությունները Օրենսգրքի *80.2-րդ* գլխի կամ դրա համաձայն ընդունված իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով հարկային մարմնին Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում յուրաքանչյուր չտրամադրված տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500 հազար դրամի չափով: Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից տեղեկությունները չտրամադրելու դեպքում յուրաքանչյուր չտրամադրված տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

3. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված տեղեկությունները Օրենսգրքի *80.2-րդ* գլխի կամ դրա համաձայն ընդունված իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով հարկային մարմնին Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ուշ

տրամադրելու դեպքում յուրաքանչյուր Օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ տրամադրված տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 250 հազար դրամի չափով:

4. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

5. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի *3-րդ* մասով սահմանված պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերի նպատակներով ստացված ինքնահայտարարագրի մեջ կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություն տրամադրելու դեպքում Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500,000 *դրամի* չափով:

6. Հաշվետերերի եւ Վերահսկող անձանց կողմից ինքնահայտարարագրի չներկայացման դեպքում կամ ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություն տրամադրելու դեպքում Հաշվետերերից կամ Վերահսկող անձանցից յուրաքանչյուր չներկայացման կամ ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկության տրամադրման համար գանձվում է տուգանք՝ 500,000 *դրամի* չափով:

7. Եթե Հաշվետու ֆինանսական հաստատությունը օտարերկրյա իրավաբանական կազմավորում կամ մասնաճյուղ է, որը գտնվում է Հայաստանում, տույժը կիրառվում է Հաշվետու ֆինանսական հաստատության գործունեության կառավարման համար պատասխանատու *անձի* նկատմամբ: Սույն մասի կիրառման նպատակով, պատասխանատու *անձը* տրաստի դեպքում ներառում են՝ *կառավարիչին,* իսկ գործընկերության դեպքում՝ գործընկերներին:

8.Սույն հոդվածով սահմանված խախտումների հայտնաբերման դեպքերում տուգանքները չեն կիրառվում, եթե ֆինանսական հաստատությունը ձեռնարկել է խախտումը վերացնելու համար անհրաժեշտ գործողություններ եւ փաստացի դրանք վերացրել է մինչեւ պատասխանատվության միջոցի վարույթի ավարտը, կամ խախտումը կրում է տեխնիկական բնույթ:

9. Մինչեւ սույն հոդվածով սահմանված տուգանքի կիրառումը, հարկային մարմինը տուգանքի կիրառման մասին վարչական ակտի նախագիծը ներկայացնում է *Հայաստանի Հանրապետության կ*ենտրոնական բանկ՝ վարչական ակտով սահմանված տուգանքի կիրառման պարագայում Հաշվետու ֆինանսական հաստատությանը *Հայաստանի Հանրապետության կ*ենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված ծանր ֆինանսական կացության հանգեցնելու հնարավորության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով: *Հայաստանի Հանրապետության կ*ենտրոնական բանկի կողմից նման եզրակացություն ստանալու դեպքում հարկային մարմինը կարող է չկիրառել վարչական ակտով արձանագրված տուգանքը, եթե Հաշվետու ֆինանսական հաստատությունը պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ:»:

Հոդված 8. Օրենսգրքի 80.2-րդ գլուխը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 80.2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Հոդված 443.3. Կիրառվող հասկացություններ

1. Սույն գլխում, ինչպես նաեւ սույն գլխի դրույթներից բխող Օրենսգրքի այլ հոդվածներում նշված հասկացություններն ունեն Ստանդարտով սահմանված նշանակությունը, մասնավորապես՝

1) Ստանդարտ՝ Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման Միասնական հաշվետվողական ստանդարտը՝ ներառյալ վերջինիս Մեկնաբանությունը, որը հաստատվել է Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության կողմից 2014 թվականի հուլիսի 15-ին՝ ներառյալ հետագա փոփոխությունները: Հարկային մարմինն ապահովում է Ստանդարտի, ինչպես նաեւ դրա փոփոխությունների եւ լրացումների թարգմանությունն ու դրանց պաշտոնական հրապարակումը՝ դրանք տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում.

2) Կոնվենցիա՝ Հայաստանի Հանրապետության կողմից 2018 թվականի հունվարի 24-ին ստորագրված «Հարկային հարցերով փոխադարձ վարչական օգնության մասին» կոնվենցիան, ներառյալ հետագա փոփոխությունները.

3) Համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետության կողմից 2024 թվականի հունվարի 12-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը՝ ներառյալ հետագա փոփոխությունները.

4) Տեղեկությունների տրամադրում՝ հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության *կ*ենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով սահմանված հաշվետվություն, որով Ստանդարտով սահմանված տեղեկությունները Հաշվետու ֆինանսական հաստատությունը ներկայացնում է հարկային մարմին.

5) Հաշվետու հաշիվ՝ մեկ կամ մի քանի Հաշվետու անձանց պատկանող ֆինանսական հաշիվ կամ պասիվ ոչ ֆինանսական կազմակերպության հաշիվ, որը վերահսկվում է Հաշվետու անձ հանդիսացող անձանց կողմից եւ որը նույնականացվել է որպես այդպիսին՝ Ստանդարտով նախատեսված պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերի կիրառման արդյունքում.

6) Հաշվետու անձ՝ Հաշվետու պետության անձ, բացառությամբ ընկերության, որի բաժնետոմսերը պարբերաբար վաճառվում են արժեթղթերի մեկ կամ մի քանի մասնագիտացված շուկայում, այդ ընկերության փոխկապակցված ընկերության, պետական մարմնի, միջազգային կազմակերպության, *Հայաստանի Հանրապետության* կենտրոնական բանկի կամ ֆինանսական հաստատության.

7) Հաշվետու ֆինանսական հաստատություն՝ *Հայաստանի Հանրապետության* ռեզիդենտ ֆինանսական հաստատություն (բացառությամբ այդ ֆինանսական հաստատության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող մասնաճյուղերի) եւ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատության մասնաճյուղ, որոնք Ստանդարտի եւ սույն կետի իմաստով չեն հանդիսանում ոչ-հաշվետու ֆինանսական հաստատություններ: Ոչ հաշվետու ֆինանսական հաստատությունների ցանկը

հաստատվում է հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հրամանով.

8) Հաշվետու պետություն՝ պետություն, որի հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա: Փոխանակում իրականացնող պետությունների ցանկը յուրաքանչյուր տարվա մինչեւ դեկտեմբերի 30-ը հարկային մարմինը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում.

9) Ազատված հաշիվ՝ Ստանդարտով սահմանված հաշիվներ, որոնց ցանկը հաստատվում է հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հրամանով:

Հոդված 443.4. Հաշվետու ֆինանսական հաստատությունների կողմից տեղեկությունների տրամադրում

1. Հաշվետու ֆինանսական հաստատությունը մինչեւ յուրաքանչյուր օրացուցային տարվա հունիսի 30-ը ներառյալ էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում նախորդ տարվա բոլոր Հաշվետու հաշիվների վերաբերյալ տեղեկությունները: Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Հաշվետու հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկությունների տրամադրման կարգը, ձեւաչափը եւ դրա լրացման կարգը սահմանվում է հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:

2. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված պատշաճ ստուգման ընթացակարգերի արդյունքում տվյալ օրացուցային տարում Հաշվետու հաշիվներ չբացահայտելու դեպքում ֆինանսական հաստատությունը մինչեւ յուրաքանչյուր օրացուցային տարվա հունիսի 30-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացնում զրոյական հաշվետվություն՝ հարկային մարմնի կողմից սահմանված կարգով եւ ձեւով:

3. Ֆինանսական հաստության կողմից Ստանդարտով սահմանված պատշաճ ստուգման ընթացակարգը սահմանվում է հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հրամանով:

Հոդված 443.5. Փաստաթղթերի պահպանությունը

1. Հաշվետու ֆինանսական հաստատությունը պարտավոր է պահպանել Ստանդարտով, Համաձայնագրով եւ սույն գլխով սահմանված պարտավորությունների կատարումը հավաստող պատշաճ ստուգման ընթացակարգերն իրականացման ընթացքում ձեռքբերված փաստաթղթերը:

2. Ֆինանսական հաշիվներին վերաբերող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաեւ համակարգչային ծրագրերում եւ էլեկտրոնային կրիչներում առկա տեղեկատվությունը, *Հաշվետու ֆ*ինանսական հաստատությունը պահպանում է օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում, բայց ոչ պակաս, քան հինգ տարի ժամկետով: Օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմինների ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի տեղեկությունների ստացման կարգերը, ինչպես նաեւ փոխանցված ֆինանսկան հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները սահմանում է Կառավարությունը:

Հոդված 443.6. Պարտավորություններից խուսափելը

1. Սույն գլխի պահանջներից խուսափելու, ինչպես նաեւ դրանք չկատարելու նպատակով որեւէ գրավոր կամ բանավոր պայմանավորվածություն ձեռք բերելու դեպքում, այն ձեռքբերած անձանց նկատմամբ տարածվում են Ստանդարտի, Համաձայնագրի եւ սույն գլխի դրույթները, եթե հաստատվում է, որ նման պայմանավորվածության հիմնական նպատակը սույն Գլխի պահանջներից խուսափելը կամ չկատարելն է:»:

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի *8-րդ* հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի *443.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով* սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը եւ *Հայաստանի Հանրապետության կ*ենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի *8-րդ* հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի *443.3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով* սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը եւ *Հայաստանի Հանրապետության կ*ենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն օրենքի *8-րդ* հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի *443.4-րդ* հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը եւ *Հայաստանի Հանրապետության կ*ենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

5. Սույն օրենքի *8-րդ* հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի *443.4-րդ* հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

6. Սույն օրենքի *8-րդ* հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի *443.4*-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը եւ *Հայաստանի Հանրապետության կ*ենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

7. Սույն օրենքի *8-րդ* հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի *443.5*-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Կ-1318-13.04.2026-ՏՀ-011/1

~~*Առաջին ընթերցում*~~

Երկրորդ ընթերցում

Լրամշակված ~~*նախագիծ*~~

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 134-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ եւ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված Հ~~հ~~աշվետու ֆինանսական հաստատությունները Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով եւ Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով

սահմանված ժամկետում հարկային մարմին են ներկայացնում Հ~~հ~~աշվետու հաշիվների վերաբերյալ Ստանդարտով սահմանված տեղեկությունները:»:

Հոդված 2. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ եւ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված Հ~~հ~~աշվետու ֆինանսական հաստատությունները Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով եւ Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով սահմանված ժամկետում հարկային մարմին են ներկայացնում Հ~~հ~~աշվետու հաշիվների վերաբերյալ Ստանդարտով սահմանված տեղեկությունները:»:

Հոդված 3. Օրենսգրքի 335-րդ հոդված~~ում~~ի 3-րդ մասում՝

~~1) 3-րդ մասում՝~~

1)~~ա.~~ 9-րդ կետում «փակցնելը:» բառը եւ կետադրական նշանը փոխարինել «փակցնելը.» բառով եւ կետադրական նշանով,

2)~~բ.~~ լրացնել նոր՝ 10-րդ կետ~~ով~~ հետեւյալ բովանդակությամբ.

«10) ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտությունը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 339-րդ հոդված~~ում~~ի 4-րդ մասում՝

~~1). 4-րդ մասում՝~~

1~~ա~~) 1-ին կետի վերջում «անմիջապես ստուգումն սկսելիս.» բառերը փոխարինել «անմիջապես ստուգումն սկսելիս, իսկ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով սահմանված հարցը ներառող հանձնարարագրի կնքված երկու օրինակը առձեռն ծանոթացման է ներկայացվում ստուգումն սկսելիս երեք աշխատանքային օր առաջ.» բառերով,

2~~բ~~) 3-րդ կետում «եւ 6-րդ» բառերը փոխարինել «, 6-րդ եւ 10-րդ» բառերով,

3~~գ~~) 4-րդ կետում «եւ 8-րդ» բառերը փոխարինել «, 8-րդ եւ 10-րդ» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 340-րդ հոդվածում՝

1) ~~1-ին մասում~~ լրացնել նոր՝ 1.2~~.~~-րդ ~~կետ~~մաս հետեւյալ ~~խմբագրությամբ~~ բովանդակությամբ.

«1.2.ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության ստուգման հարցերը ներառում են՝

1)~~ա. Հ~~հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի 443.4~~3~~-րդ հոդվածի 1~~2~~-~~դդ~~ին մասով սահմանված հարկային մարմին ներկայացվող ~~հաշվետվության մեջ ներառված~~ տեղեկությունների ամբողջականությունը եւ ճշտությունը ստուգելու նպատակով հարցերը,

2) ~~բ. Հ~~հաշվետու ֆինանսական հաստատության կողմից պատշաճ ստուգման ընթացակարգերով նախատեսված պարտավորությունների կատարումը ստուգելու հարցերը,

3) ~~գ.~~Օրենսգրքի 80.2-րդ գլխից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների կատարումը ստուգելու հարցերը:»:

2) 6-րդ մասում «տրանսֆերային գնագոյացման» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ թեմատիկ՝ ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության» բառերը:

Հոդված 6.Օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասում «եւ 8-րդ» բառերը փոխարինել «, 8-րդ եւ 10-րդ» բառերով:

Հոդված 7~~6~~. Օրենսգրքի 402.3-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 402.3. Հաշվետու ֆինանսական հաստատության կամ հաշվետերերի եւ վերահսկող անձանց կողմից ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու, հաշվետերերի եւ վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն ներկայացնելու, ստուգման (ուսումնասիրության) ընթացակարգերը պահպանելու կանոնները խախտելը

1. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի 80.2-~~դդ~~ գլխով կամ 80.2-~~դդ~~ գլխով սահմանված իրավական ակտերով սահմանված պատշաճ ուսումնասիրության կամ հավաստող փաստաթղթերի պահպանման պարտավորությունները յուրաքանչյուր հաշվետիրոջ մասով չկատարելու դեպքում՝

Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

2. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված տեղեկությունները Օրենսգրքի 80.2-րդ գլխի կամ դրա համաձայն ընդունված իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով հարկային մարմնին Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում յուրաքանչյուր չտրամադրված տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500 հազար դրամի չափով: Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից տեղեկությունները չտրամադրելու դեպքում յուրաքանչյուր չտրամադրված տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

3. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված տեղեկությունները Օրենսգրքի 80.2-րդ գլխի կամ դրա համաձայն ընդունված իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով հարկային մարմնին Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ուշ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր Օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ տրամադրված տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 250 հազար դրամի չափով:

4. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում յուրաքանչյուր ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկության համար Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:

5. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 3~~4~~-րդ մասով սահմանված պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերի նպատակներով ստացված ինքնահայտարարագրի մեջ կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություն տրամադրելու դեպքում Հաշվետու ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500,000 ~~<<~~ դրամի չափով:

6. Հաշվետերերի եւ Վերահսկող անձանց կողմից ինքնահայտարարագրի չներկայացման դեպքում կամ ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություն տրամադրելու դեպքում Հաշվետերերից կամ Վերահսկող անձանցից յուրաքանչյուր չներկայացման կամ ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկության տրամադրման համար գանձվում է տուգանք՝ 500,000 ~~ՀՀ~~ դրամի չափով:

7. Եթե Հաշվետու ֆինանսական հաստատությունը օտարերկրյա իրավաբանական կազմավորում կամ մասնաճյուղ է, որը գտնվում է Հայաստանում, տույժը կիրառվում է Հաշվետու ֆինանսական հաստատության գործունեության կառավարման համար պատասխանատու անձ~~(~~ի~~-անց)~~ նկատմամբ: Սույն մասի կիրառման նպատակով, պատասխանատու անձ~~(-ինք)~~ը տրաստի դեպքում ներառում են՝ կառավարիչ~~(ներ)~~ին, իսկ գործընկերության դեպքում՝ գործընկերներին:

8.Սույն հոդվածով սահմանված խախտումների հայտնաբերման դեպքերում տուգանքները չեն կիրառվում, եթե ֆինանսական հաստատությունը ձեռնարկել է խախտումը վերացնելու համար անհրաժեշտ գործողություններ եւ փաստացի դրանք վերացրել է մինչեւ պատասխանատվության միջոցի վարույթի ավարտը, կամ խախտումը կրում է տեխնիկական բնույթ:

9.Մինչեւ սույն հոդվածով սահմանված տուգանքի կիրառումը, հարկային մարմինը տուգանքի կիրառման մասին վարչական ակտի նախագիծը ներկայացնում է ~~ՀՀ~~Հայաստանի Հանրապետության–կ~~Կ~~ենտրոնական բանկ՝ վարչական ակտով սահմանված տուգանքի կիրառման պարագայում Հ~~հ~~աշվետու ֆինանսական հաստատությանը Հայաստանի Հանրապետության ~~Կ~~կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված ծանր ֆինանսական կացության հանգեցնելու հնարավորության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով: Հայաստանի Հանրապետության կ~~Կ~~ենտրոնական բանկի կողմից նման եզրակացություն ստանալու դեպքում հարկային մարմինը կարող է չկիրառել վարչական ակտով արձանագրված տուգանքը, եթե Հ~~հ~~աշվետու ֆինանսական հաստատությունը պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ:»:

Հոդված 87. Օրենսգրքի 80.2-րդ գլուխը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 80.2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Հոդված 443.3. Կիրառվող հասկացություններ

1. Սույն գլխում, ինչպես նաեւ սույն գլխի դրույթներից բխող Օրենսգրքի –այլ հոդվածներում նշված հասկացություններն ունեն Ստանդարտով սահմանված նշանակությունը, մասնավորապես՝

1) Ստանդարտ՝ Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման Միասնական հաշվետվողական ստանդարտը՝ ներառյալ վերջինիս Մեկնաբանությունը, որը հաստատվել է Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության կողմից 2014 թվականի հուլիսի 15-ին՝ ներառյալ հետագա փոփոխությունները: Հարկային մարմինն ապահովում է Ստանդարտի, ինչպես նաեւ դրա փոփոխությունների եւ լրացումների թարգմանությունն ու դրանց պաշտոնական հրապարակումը՝ դրանք տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում.

2) Կոնվենցիա՝ Հայաստանի Հանրապետության կողմից 2018 թվականի հունվարի 24-ին ստորագրված «Հարկային հարցերով փոխադարձ վարչական օգնության մասին» կոնվենցիան, ներառյալ հետագա փոփոխությունները.

3) Համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետության կողմից 2024 թվականի հունվարի 12-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը՝ ներառյալ հետագա փոփոխությունները.

4) Տեղեկությունների տրամադրում՝ հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կԿենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով սահմանված հաշվետվություն, որով Ստանդարտով սահմանված տեղեկությունները Հաշվետու ֆինանսական հաստատությունը ներկայացնում է հարկային մարմին.

5) Հաշվետու հաշիվ՝ մեկ կամ մի քանի հՀաշվետու անձանց պատկանող ֆինանսական հաշիվ կամ պասիվ ոչ ֆինանսական կազմակերպության հաշիվ, որը

վերահսկվում է Հաշվետու անձ հանդիսացող անձանց կողմից եւ որը նույնականացվել է որպես այդպիսին՝ Ստանդարտով նախատեսված պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերի կիրառման արդյունքում.

6) Հաշվետու անձ՝ Հաշվետու պետության անձ, բացառությամբ ընկերության, որի բաժնետոմսերը պարբերաբար վաճառվում են արժեթղթերի մեկ կամ մի քանի մասնագիտացված շուկայում, այդ ընկերության փոխկապակցված ընկերության, պետական մարմնի, միջազգային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կամ ֆինանսական հաստատության.

7) Հաշվետու ֆինանսական հաստատություն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական հաստա-տություն (բացառությամբ այդ ֆինանսական հաստատության՝ Հայաստանի Հանրապետու-թյան տարածքից դուրս գտնվող մասնաճյուղերի) եւ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատության մասնաճյուղ, որոնք Ստանդարտի եւ սույն կետի իմաստով չեն հանդիսանում ոչ-հաշվետու ֆինանսական հաստատություններ: Ոչ հաշվետու ֆինանսական հաստատությունների ցանկը հաստատվում է հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հրամանով.

8) Հաշվետու պետություն՝ պետություն, որի հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա: Փոխանակում իրականացնող պետությունների ցանկը յուրաքանչյուր տարվա մինչեւ դեկտեմբերի 30-ը հարկային մարմինը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում.

9) Ազատված հաշիվ՝ Ստանդարտով սահմանված հաշիվներ, որոնց ցանկը հաստատվում է հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հրամանով:

Հոդված 443.4. Հաշվետու ֆինանսական հաստատությունների կողմից տեղեկությունների տրամադրում

1. Հաշվետու ֆինանսական հաստատությունը մինչեւ յուրաքանչյուր օրացուցային տարվա հունիսի 30-ը ներառյալ էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում նախորդ տարվա բոլոր Հ~~հ~~աշվետու հաշիվների վերաբերյալ տեղեկությունները: Հ~~հ~~աշվետու ֆինանսական հաստատության կողմից Հ~~հ~~աշվետու հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկությունների տրամադրման կարգը, ձեւաչափը եւ դրա լրացման կարգը սահմանվում է հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:

2. Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Ստանդարտով սահմանված պատշաճ ստուգման ընթացակարգերի արդյունքում տվյալ օրացուցային տարում Հ~~հ~~աշվետու հաշիվներ չբացահայտելու դեպքում ֆինանսական հաստատությունը մինչեւ յուրաքանչյուր օրացուցային տարվա հունիսի 30-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացնում զրոյական հաշվետվություն՝ հարկային մարմնի կողմից սահմանված կարգով եւ ձեւով:

3. Ֆինանսական հաստության կողմից Ստանդարտով սահմանված պատշաճ ստուգման ընթացակարգը սահմանվում է հարկային մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հրամանով:

Հոդված 443.5. Փաստաթղթերի պահպանությունը

1. Հաշվետու ֆինանսական հաստատությունը պարտավոր է պահպանել Ստանդարտով, Համաձայնագրով եւ սույն գլխով սահմանված պարտավորությունների կատարումը հավաստող պատշաճ ստուգման ընթացակարգերն իրականացման ընթացքում ձեռքբերված փաստաթղթերը:

2. Ֆինանսական հաշիվներին վերաբերող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաեւ համակարգչային ծրագրերում եւ էլեկտրոնային կրիչներում առկա տեղեկատվությունը, Հաշվետու ֆ~~Ֆ~~ինանսական հաստատությունը պահպանում է օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում, բայց ոչ պակաս, քան հինգ տարի ժամկետով: Օտարերկրյա պտությունների (տարածքների) իրավասու

մարմինների ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի տեղեկությունների ստացման կարգերը, ինչպես նաեւ փոխանցված ֆինանսկան հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները սահմանում է Կառավարությունը:

Հոդված 443.6. Պարտավորություններից խուսափելը

1. Սույն գլխի պահանջներից խուսափելու, ինչպես նաեւ դրանք չկատարելու նպատակով որեւէ գրավոր կամ բանավոր պայմանավորվածություն ձեռք բերելու դեպքում, այն ձեռքբերած անձանց նկատմամբ տարածվում են Ստանդարտի, Համաձայնագրի եւ սույն գլխի դրույթները, եթե հաստատվում է, որ նման պայմանավորվածության հիմնական նպատակը սույն Գլխի պահանջներից խուսափելը կամ չկատարելն է:»:

Հոդված 98. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 8~~7~~-րդ հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի 443.3~~.~~-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով~~մասով~~ սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը եւ Հայաստանի Հանրապետության կ~~Կ~~ենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 8~~7~~-րդ հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի 443.3~~.~~-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով ~~մասով~~ սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը եւ Հայաստանի Հանրապետության կ~~Կ~~ենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն օրենքի 8~~7~~-րդ հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի 443.4~~.~~-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական

նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը եւ Հայաստանի Հանրապետության կԿենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

5. Սույն օրենքի 87-րդ հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի 443.4.-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

6. Սույն օրենքի 87-րդ հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի 443.4.-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը եւ Հայաստանի Հանրապետության կԿենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

7. Սույն օրենքի 87-րդ հոդվածով խմբագրվող՝ Օրենսգրքի 443.5.-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-1318-13.04.2026-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Հոդված 3 և Հոդված 4**	Նախագծի 3-րդ հոդվածից առաջարկում ենք հանել «3-րդ մասում՝» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 3-րդ հոդվածում այլ կետ առկա չէ, ինչպես նաեւ այն, որ քննարկվող դրույթով փոփոխություն եւ լրացում կատարվում է միայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 335-րդ հոդվածի 3-րդ մասում, հետեւաբար այդ բառերն առանձին կետով սահմանելու նպատակ առկա չէ: Սույն դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 4-րդ հոդվածի	Ընդունվել է: Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածները խմբագրվել են՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի:	Ընդունվել է:

			համարակալմանը:		
2.	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Հոդված 3**	Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել նոր՝ 10-րդ կետի, ինչի արդյունքում սահմանվում է թեմատիկ հարկային ստուգման նոր տեսակ՝ ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտությունը: Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետով Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություն կատարելու արդյունքում դրանով սահմանվում է, որ ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության հարցը ներառող հանձնարարագրի կնքված երկու օրինակը առձեռն ծանոթացման է ներկայացվում ստուգումն սկսելիս երեք աշխատանքային օր առաջ: Օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասությամբ սահմանված է. «Թեմատիկ հարկային ստուգումների անցկացման ժամանակ (այդ թվում՝ հանձնարարագրին ծանոթանալուց եւ ստանալուց հրաժարվելու դեպքում) ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում հանձնարարագիրը	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետով Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվող փոփոխության եւ Օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասի միջեւ առկա հակասությունը բացառելու նպատակով Նախագիծը լրացվել է նոր՝ 6-րդ հոդվածով, հետևյալ բովանդակությամբ. *«Հոդված 6.Օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասում «եւ 8-րդ» բառերը փոխարինել «,8-րդ եւ 10-րդ» բառերով:»:*	Ընդունվել է:

			ծանոթացման ներկայացնելու օրը, բացառությամբ Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ կետերով սահմանված հարցերի ստուգման, երբ գործում են Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով այդ ստուգման հարցերի համար սահմանված առանձնահատկությունները»: Օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասի բացառությունների մեջ 335-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետը չներառելու արդյունքում ստացվում է, որ ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտությունը ստուգելու ժամանակ ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում հանձնարարագրիը ծանոթացման ներկայցնելու օրը, որը, Նախագծի 4-րդ հոդվածով կատարվող փոփոխության համաձայն, ստուգումը սկսելուն նախորդող երրորդ աշխատանքային օրն է: Վերը մեջբերված դրույթների համադրության արդյունքում կատարված վերլուծությունից բխում է, որ Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետով Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվող փոփոխության եւ Օրենսգրքի		

			341-րդ հոդվածի 1-ին մասի միջեւ, առաջարկում ենք առկա հակասությունը վերացնել:		
3.	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Հոդված 5**	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետում առաջարկում ենք «խմբագրությամբ» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ կետով Օրենսգրքի 340-րդ հոդվածում կատարվում է լրացում: Սույն դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածից:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետում «խմբագրությամբ» բառը փոփոխվել է «բովանդակությամբ» բառով:	Ընդունվել է:
			Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետն առաջարկում ենք խմբագրել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դրանով նախատեսվում է Օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 1.2-րդ կետ այն դեպքում, երբ այդ մասը կետերի ընդհանրապես բաժանված չէ:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետը խմբագրվել է:	Ընդունվել է:
			Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետով Օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1.2-րդ կետի համարակալումը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջին, մասնավորապես՝ 1.2-րդ կետը համարակալված է որպես մաս, բայց այն բաժանվում է ենթակետերի:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածը խմբագրվել է հետևյալ կերպ. «***Հոդված 5.*** Օրենսգրքի 340-րդ հոդվածում՝ 1) լրացնել նոր՝ 1.2-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ. «1.2. ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության ստուգման հարցերը ներառում են՝ 1)Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկային մարմին ներկայացվող տեղեկությունների ամբողջականությունը եւ	Ընդունվել է:

			Առաջարկում ենք բացառել Նախագծի եւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի միջեւ առկա հակասությունները: Միաժամանակ առաջարկում ենք քննարկվող նորմում նշված «1.2.-րդ» ձեւակերպման մեջ երկրորդ միջակետը հանել, քանի որ այն ավելորդ է: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 8-րդ հոդվածում առկա նմանատիպ ձեւակերպումներին:	ճշտությունը ստուգելու նպատակով հարցերը, 2)Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից պատշաճ ստուգման ընթացակարգերով նախատեսված պարտավորությունների կատարումը ստուգելու հարցերը, 3) Օրենսգրքի 80.2-րդ գլխից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների կատարումը ստուգելու հարցերը:»: 2) 6-րդ մասում «տրանսֆերային գնագոյացման» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ թեմատիկ՝ ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության» բառերը:»: Նախագծի 8-րդ հոդվածի համապատասխան ձևակերպումները նույնպես խմբագրվել են:	
			Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետով Օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1.2-րդ կետով հղում է կատարվում Օրենսգրքի 443.3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հաշվետվությանը, մինչդեռ Նախագծի 7-րդ հոդվածով Օրենսգրքի 443.3-րդ հոդվածի՝ նոր խմբագրությամբ շարադրվելու արդյունքում վերջինս այլեւս չունի 2-րդ մաս: Առաջարկում ենք քննարկվող հղումը շտկել: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 402.3-րդ հոդվածի 5-րդ	Ընդունվել է: Օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1.2-րդ կետով հղված՝ Օրենսգրքի «443.3-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինվել են «443.4-րդ հոդվածի 1-ին մասով» բառերով:	Ընդունվել է:

			մասում Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի գոյություն չունեցող 4-րդ մասին կատարվող հղմանը: Սխալ հղումներ առկա են նաեւ Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում:		
4.	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Հոդված 6**	Նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 402.3-րդ հոդվածում առկա բոլոր «80.2» ձեւակերպումներն առաջարկում ենք փոխարինել «80.2-րդ» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենսգրքում կիրառվում է «80.2-րդ» տարբերակը: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից, այն է. «Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձեւը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձեւին (տեսքին)»:	Ընդունվել է: 1. Նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 402.3-րդ հոդվածում առկա բոլոր «80.2» ձեւակերպումներն փոխարինվել է «80.2-րդ» ձեւակերպմամբ:	Ընդունվել է:
			Նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 402.3-րդ հոդվածի 7-րդ մասում կիրառված «անձ(-	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 402.3-րդ հոդվածի 7-րդ մասում կիրառված «անձ(-անց)», «անձ(-ինք)ը» եւ «կառավարիչ(ներ)ին» ձեւակերպումների հոգնակի թվի ձեւակերպումները հանվել են:	Ընդունվել է:

			անց)», «անձ(-ինք)ը» եւ «կառավարիչ(ներ)ին» ձեւակերպումների հետ կապված նշենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված է. «Եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաեւ այդ բառի հոգնակիի վրա եւ ընդհակառակը»:		
			Նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 402.3-րդ հոդվածում առկա բոլոր «ՀՀ» հապավումներն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արգելքը, այն է. «Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաեւ բառերի կամ տերմինների հապավումներ», ինչպես նաեւ այն հանգամանքը, որ Օրենսգրքում դրամական արժեքներ արտահայտելիս կիրառվում է միայն «դրամ» բառը, հետեւաբար Նախագծում առկա է նաեւ հակասություն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 402.3-րդ հոդվածում առկա բոլոր «ՀՀ» հապավումները հանվել են: Համապատասխան փոփոխություն է իրականացվել նաև Նախագծի 7-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 443.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված «ՀՀ» հապավումը փոխարինելով «Հայաստանի Հանրապետության» բառերով:	Ընդունվել է:

			մասով սահմանված նույն միտքն արտահայտող բառերի միատեսակ կիրառության պահանջի հետ եւս: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հապավումների կիրառման վերաբերող արգելքը տարածվում է նաեւ Նախագծի 7-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 443.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված «ՀՀ» հապավման նկատմամբ, հետեւաբար առաջարկում ենք դրանում նշված «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով:		
5.	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Հոդված 7**	Նախագծի 7-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 443.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-8-րդ կետերով սահմանվող հասկացությունները շարադրված են մեծատառով, մինչդեռ Նախագծի մի շարք դրույթներում դրանք կիրառվում են փոքրատառով: Առաջարկում ենք ապահովել նույն միտքն արտահայտող բառերի միատեսակ կիրառությունը Նախագծի բոլոր դրույթներում: Սույն դիտարկումը բխում է	Ընդունվել է: Նախագծի 7-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 443.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-8-րդ կետերով սահմանվող հասկացությունները Նախագծում համապատասխան փոփոխվել են՝ Նախագծում կիրառելով տվյալ հասկացությունները մեծատառով:	Ընդունվել է:

			«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջներից:		
6.	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Նախագծի ողջ տեքստում**	Նախագծի ողջ տեքստում միաժամանակ կիրառվում են «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ», «ՀՀ Կենտրոնական բանկ», «Կենտրոնական բանկ» եւ «կենտրոնական բանկ» բառերը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է. «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»՝ առաջարկում ենք կիրառել միայն Օրենսգրքում օգտագործվող «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» տարբերակը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ որջ տեքստում կիրառելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» տարբերակը:	Ընդունվել է:

7.	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Հոդված 8**	Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրն հանվել է:	Ընդունվել է:
8.	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Հոդված 5**	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է Հարկային օրենսգրքի 340-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.2-րդ կետ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ նախագծով առաջարկվող կարգավորումն իր բովանդակությամբ հանդիսանում է հոդվածի ինքնուրույն մաս, այլ ոչ թե գործող 1-ին մասի առանձին կետ կամ ենթակետ: Միաժամանակ, նախագծում տվյալ դրույթը շարադրված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կանոններին համապատասխանող ձևակերպմամբ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վերանայել նախագծի համապատասխան դրույթի շարադրանքը՝ «1.2-րդ կետ» ձևակերպումը	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի համապատասխան դրույթի շարադրանքը փոփոխվել է՝ «1.2-րդ կետ» ձևակերպումը փոխարինելով «1.2-րդ մաս» ձևակերպմամբ:	Ընդունվել է:

			փոխարինելով «1.2-րդ մաս» ձևակերպմամբ:		
9.	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Հոդված 8**	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Հարկային օրենսգրքի 443.5-րդ հոդվածի 2-րդ մասում «Ֆինանսական հաստատությունը» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «Հաշվետու» բառը՝ նկատի ունենալով նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Հարկային օրենսգրքի 443.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը:	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Հարկային օրենսգրքի 443.5-րդ հոդվածի 2-րդ մասում «Ֆինանսական հաստատությունը» բառերից առաջ լրացվել է «Հաշվետու» բառը:	Ընդունվել է:

10	***Հայաստանի Հանրապետության կառավարություն***	**Հոդված 9**	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «443.3-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «443.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով» բառերով, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում «443.3-րդ հոդվածի 9-րդ մասով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «443.3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով» բառերով՝ նկատի ունենալով, որ Օրենսգրքի 443.3-րդ հոդվածը չունի համապատասխանաբար 7-րդ և 9-րդ մասեր, իսկ հիշյալ կարգավորումները նախատեսված են տվյալ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 9-րդ կետերով:	Ընդունվել է: Նախագծի 9-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	